

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 3 Ա Ն
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ
ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4 (ՀՕ-373) ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

“3) տալիս է եզրակացություն՝

ա. ջրավազանային կառավարման պլան չունեցող տարածքներում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման նպատակով ջրօգտագործման թույլտվությունների տրման վերաբերյալ.

բ. ջրավազանային կառավարման պլան չունեցող տարածքներում փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման նպատակով ջրօգտագործման թույլտվությունները 5 տարուց մինչև 15 տարի ժամկետով տրման վերաբերյալ.”:

Հոդված 2. Օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

“Ջրավազանային կառավարման պլան չունեցող տարածքներում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չի կարող 5 տարուց ավել լինել, բացառությամբ շահագործման նպատակով փոքր հիդրոէլեկտրակայաններին տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների:

Ջրավազանային կառավարման պլան չունեցող տարածքներում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման նպատակով ջրօգտագործման թույլտվությունները տրվում են Հայաստանի Հանրապետության Զրի ազգային խորհրդի դրական եզրակացության դեպքում:

Զրի ազգային խորհրդի դրական եզրակացության դեպքում՝ ջրավազանային կառավարման պլան չունեցող տարածքներում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման նպատակով ջրօգտագործման թույլտվությունները տրվում են 5 տարի ժամկետով, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների արտադրության նպատակով՝ մինչև 15 տարի ժամկետով.”:

Ջրօգտագործման թույլտվությունների տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ “ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈԹՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ” ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	Հոդվածի համարը	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ Եզրակացությունը
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածի “հոնիսի 4” բառերից հետո ավելացնել “ՀՕ-373” բառերը:	Ընդունվել է:
	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածի ա/ և բ/ կետերը միացնել և շարադրել հետևյալ խմբագրությամբ` “Ջրավազանային կառավարման պլան չունեցող տարածքներում փոքր հիդրոէլեկտրակայան- ների կառուցման նպատակով ջրօգտագործ- ման թույլտվությունների տրման վերաբերյալ` 5 տարուց մինչև 15 տարի ժամկետով”:	Զի ընդունվել: Ներկայացված առաջարկության համաձայն ՓՀԷԿ-երի կառուցման ջրօգտագործման թույլտվությունները պետք է տրվեն 5 տարուց մինչև 15 տարի ժամկետով, ինչն անընդունելի է, քանի որ ՓՀԷԿ-երի կառուցման լիցենզիաները որպես կանոն հիմնականում տրվում են մեկից երկու տարով, և նույն ժամանակահատվածի համար էլ ձևակերպվում է ջրօգտագործման թույլտվությունը: Ինչ վերաբերվում է ՓՀԷԿ-երի շահագործման համար ջրօգտագործման թույլտվությունների տրամադրմանը 15 տարի ժամկետով, ապա դա օրենքի նախագծում հաշվի է առնված և մշակվել է հենց այդ նպատակով: